ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ

N 02-136
30. հուլիսի 2021թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ է ներկայացվում ՀՀ Արմավիրի մարզպետի 2021 թվականի ապրիլի 27-ի N ՄՈ/126-2021 որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից ՀՀ Արմավիրի մարզի Նորապատ համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը և ավագանու որոշումները:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

Համայնքի ղեկավարի փոխարինող,
համայնքի ղեկավարի տեղակալ Ս.Արշակյան

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

2021 թվականին Նորապատ համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ

Համայնքում իրականացված իրավական հսկողության արդյունքները քննարկվել են ավագանու նիստում, արձանագրված խախտումները վերացնելու առնչությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ՝ յուրաքանչյուր խախտման առումով կայացվել են համայնքի ավագանու որոշումներ:

1.Համայնքի բյուջեում փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելու ընթացակարգի սահմանումն ընդունվել է պահանջը և հաստատվել համայնքի ավագանու 19 հուլիսի 2021թվականի N10 որոշմամբ

2. Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը նպատակահարմար չենք գտնում մշակել քանի որ համայնքի ղեկավարը մայիսի 30 ին իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից և հիմա համայնքի ղեկավարի տեղակալն հանդիսանում է ժամանակավոր պաշտոնակատար:

3. Համայնքի բյուջեի կատարման վերաբերյալ եռամսյա հաշվետվությունը ներկայացվել է ավագանու հաստատմանը և այսուհետ մշտապես կպահպանվի ՀՀ գործող օրենսդրության պահանջը /2021 թվականի հուլիսի 19-ի N 11 որոշում/:

4. Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի կամավոր խնդիրների, կամավոր խնդիրների ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգում 19 հուլիսի 2021 թվականի N10 որոշմամբ:

5. Համայնքի ավագանու կողմից հաստատվել է տեղական տուրք և վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգը 19 հուլիսի 2021թվականի N12 որոշմամբ:

6. Հետայսու Աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների քանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը կհաստատվի ավագանու առանձին որոշմամբ:

7. Քաղաքաշինական կանոնադրությունը հաստատվել է համայնքի ավագանու 19 հուլիսի 2021թվականի N19 որոշմամբ:

8. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման կարգը հաստատելու մասին ավագանու 19 հուլիսի 2021 թվականի N13 որոշում:

9. Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու մասին 19 հուլիսի 2021թվականի N15 որոշմամբ:

10. Համայնքի ավագանու կողմից հաստատվել է համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու կարգն ու պայմանները սահմանելու վերաբերյալ 19 հուլիսի 2021թվականի N14 որոշմամբ:

11. Համայնքի ավագանու կողմից ընդունվել է որոշում Նորապատ համայնքի ավագանու անդամ Պավել Զաքարյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին/ 19 հուլիսի 2021թվականի N16որոշում/:

12. Համայնքի ավագանու կողմից ընդունվել է որոշում Նորապատի համայնքապետարանի աշխատակազմի արխիվ ստեղծելու մասին/ 19 հուլիսի 2021 թվականի N17 որոշում/: